## ԾԵՐՈՒՆԻՈՑ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ ԵՒ ՄԱՀԸ.

Մահն ազատ ինձ կանչում է
Դէպ Հայրենի Մօրս ծոց,
Նոր կեանք ինձ խոստանում է՝
Ուր փարատի սրտիս խոց:
Ո՛հ դառն է ինձ այս աշխարհ,
Դառն է սորա հրապուրանք.
Ամենն աչքիս են վտթար,
Քանի մնանք՝ պէտք է լանք:
Ես գնում եմ յայն հանդէս,
Ուր ակմբած են որդիքս,
Ուր կտեսնեմ իմ Ներսէս
Քաջ ընկերաց հետ Գագիկս:
Այն տեղ լինի սուրբ սեղան,
Եւ սրբութեան տաճարներ.
Այն տեղ կեանք ինձ անվախճան,
Ազատութեան նոր օրեր:
Որքան ունիս մեծութիւն,
Զունիս մի յոյս հաստատուն,
Որքան գանձեր ժողովես,
Զունիս անքանտ տեղ ու տուն:
Գարնան բուսած ծաղկի պէս
Ամեն մի փառք կանցանէ,
Տրտմութեամբ լիք տան տնտես
Ննջման տանից կելանէ:
Ահա ինձ ձեզ օրինակ,
Որ ունեցայ շատ որդիք,
Շատ գանձատուն եւ սենեակք
Եւ վարչութիւնք, հրքանիք:
Այժմ զրկուած ամենից,
Տեսէք օրս վատաբախտ.
Թափուր եմ բոլոր փառքից
Մարմինս պատած է ժանտախտ:
Պէտք է շինենք մեզ տներ
Երկընքումը հոգեպէս,
Որ չխախտեն դող. գետեր
Թշնամութեան մեծապէս:
Մնաք բարեաւ կացարանք,
Իմ ծննդեան որրաններ,
Որդւոցս վեհ հանդիսարանք
Նուիրական տաճարներ:
Մնաք բարեաւ ամենքին,
Իմ հովիտներ եւ լեռներ,
Իմ ծաղկաւէտ դաշտորայք,
Կարկաչասահ սուրբ գետեր:
Մնաք բարեաւ ցանկալի
Իմ օրհնաղուրկ քաղաքներ
Բազմահազար խեղճ Անի,
Այրիացեալ աւաններ:
Մնաք բարեաւ ձեզ որդիկք
Կաթնակարօտ զաւակներ,
Վերջին դրդուանքս կենսալից
Ձեզ նուիրեմ սրտամեռ:
Ո՛հ իմ ոսկերք միշտ թացէք
Ձեր արտասուաց կաթիլով,
Եւ անուշս մի կորուսէք՝
Դարուց ի դարս յիշելով:
Դէհ ընդունէք իմ վերջի
Հրաժարական այս բարեւ.
Ժամ է ինձ անդառնալի
Մտնել յայս տուն անարեւ:
Կգայ մի օր ինձ համար՝
Որ ես կելնեմ այս շիրմէս,
Կտեսնեմ ձեզ շրջապար
Եւ կառնեմ ձեզ նոր կրկաւ:
Բայց արա դուռդ ով շիրիմ,
Մտնեմ այս տեղ ի հանգիստ.
Վաղուց արդէն սպասում եմ
Քոյդ մէջ առնել վերջին նիստ:

ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆՑ.

Յիշէ—ան.

---

## ԴԷՋՖՈՒԼ.

---

Թող հրճուի այսուհետ անձկալի Հայաստանը,
Իւր հարազատ ծոցումն տնկեցին բուրաստանը:
Յուսամ լինի ոսկեղար Նորահաս մանկանց համար,
Փայլին Նոքա գոյնզգոյն որպէս ծիածան կամար:
Հայաստանի մեղմ օդը թող տայ Նորանց զօրութիւն,
Շուտով ծաղկին ազգի մէջ ապագային օգնութիւն: